φαλλούσης), «Սաստկեսցէ սիրտ նորա,» Ժ. 14, ուղղ. «սիրտ» (= ἡ καρδία αὐτοῦ), «Եւ ասացի,» ԻԴ 13, ուղղ. «Եւ ասաց» (= καὶ εἶπεν), «ի մաղինս խախալելոյ,» ԻԷ 5, ուղղէ «ի մաղին» (= ἐν σείσματι κοσκίνου), «ի ժամուց զարթիր,» ԼԵ 15, կարդա՛ «ի ժամու» (= ἐν ὥρᾳ), «լաւ է մարդոյ, որ թագուցանէ» ԽԱ 18, կարդա՛ «մարդ» (= κρείσσων ἄνθρωπος)։

(Շարունակելի։) Հ. Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

# ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ

*Ցուցակ Ձեռագրաց Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյն:*

(Շարունակութիւն։)

## 4.

## ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

### ՌՃԾԳ = 1704.

*ԹՈՒՂԹՔ՝ 587: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 44×28×12 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, երկսիւն, իւրաքանչիւրը 32×9 սմ.: – ԳԻՐ՝ բոլորգիր. թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատառերն ու սկզբնատողերը աղիւսագոյն եւ բալագոյն. տող՝ 41: — ՆԻՒԹ՝ մագաղաթանման ընտիր թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակէ: — ՄԱԳԱՂԱԹՆԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գոհացուցիչ. քանի մը թերթ միայն պակաս: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ 13ա, 385ա: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐԸ, գլխազարդերը, էջ 13բ, 242բ եւ 385բ դրուած մեծադիր պատկերները շատ ճաշակաւոր ու գեղեցիկ: – ԳՐԻՉ՝ Սարգիս քահանայ. ստացող՝ Պարոն Մինաս կամ հայրը Վարդան: – ԹՈՒԱԿԱՆ՝ ՌՃԾԳ – 1704:*

Նոր վկաներէն կը պարունակէ ինչ որ Թիւ 34. հոս աւելի են Գուրիթ Խարբերդցի, Խաչատուր Կողբեցի, Վարդան Բաղիշեցի, Գրիգոր Խլաթեցի, Միրաք Թաւրիզեցի, Յովհաննէս եպս. Տարօնոյ, Մուրատ Վանեցի եւ Պուտախ Ամթեցի։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 8ա (եւ այլուր միջա). Մանաւանդ(դ) զըստացօղ գրոցս վարդանին եւ կողակցոյն հաւմին եւ որդւոյն մինասին. ծերունին գաբրիէլին եւ եղբօրն սիմոնին եւ եղբօրորդւոյն հորապետին եւ արութենին եւ ամ արեան մերձաւորացն ընթերցողացն եւ ու»։ (վերջին ստացող մը Մելքոն, առաջին գրչին յիշատակութեանց վրայ նոր թերթիկներ կպցնելով՝ գրած է իր եւ իր քանի մը ազգականներուն յիշատակութիւնները. բայց որովհետեւ գլխաւոր յիշատակարանին տակ թողած է նաեւ իր ընդ. ձակ յիշատակարանը, ուստի զանց կ'ընենք այս փոքրիկ յիշատակութիւնները դնել հոս, մանաւանդ որ նոր տեղեկութիւն մը չեն պարունակեր բնաւ)։

Էջ 48ա (շղագիր). 1895 թուականին 17 Ապրիլի փառք քեզ տէր Աստուած ես ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ ամենայն սրբոց եթէ. Ստեփան Աւետիսեան Առաքելեանց ի քաղն Նոր բայազիդ (կ'երեւայ թէ այս անձն է որ ձեռագրիս պատառած թերթերը թղթիկներով փակցուցեր եւ նորոգեր է)։

Էջ 69ա (այլ գրչէ) փառք ձեզ այսպիսի տանջանքիս որ տեսայ 1857 ամի ձեռնագրեց սարգիս եպիսկոպոս քհանայ։

Էջ 72 (այլ գրչէ) տիրացու գասպար սարգիսեան տէր մարտիրոսեանց։

Էջ 80 (այլ գրչէ) եսայի կարապետ. թաթոս մարտիրոս. գեղամ ալէքսան. Գէորգ մայամ. պետրոս եսայի։

Էջ 123բ (այլ գրչէ). Ես տիրացու սարգիս եկի աստ կարդացի այս այսմաւուրք 1869 ամի 28 օրն հոկտեմբերին ամէն։

Էջ 445ա (այլ գրչէ). Գամաղիէլին եւ իւր ծնողաց խանդառին։

Էջ 461ա (բուն գրչէն) ...եւ գրողի տէր սարգիս գրչին հող եւ փոշի մեղօք ի լի եւ իմ ծնողացս տէր առողմնին։

Էջ 586բ (Գլխաւոր յիշատակարան). Յիշատակարանն է ՚նք տառիս որ ունի յինքն զըոլոր տարին. Փառք անբաժանելի եւ միաւնական ՚ըր երրորդութեն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն ՚րբոյ։ Յամ ՚րոց. եւ ամ տարածոց։ եւ իմանալեաց եւ ի զգալեաց ի հրշկց եւ ի մարդկանէ. վեր առաքեսցուք զաւրհնութիւնս հագեւորս. յամ ժամ ամէն։ Եւ արդ քանզի որք մեծութի ընչից ըղձանան ոչ ինչ աշխատութի զմտաւ ածեն. յայլմէ յայլ անցանեն գաւառս հեռագնաց ուղեւորութ՚ր առ ի զշահն անձնացուցեալ մարդասիրին։ Նա՛ եւ ընդ համատարած ծովուն ծփանս նաւարկեալ. որք բարկացեալ ալեօքն լեռնացեալ բարձրանան ընդ ընդոտնոյս խորոցն փքացեալ կուտիցն մէտ առ մէտ ալեացն ահ պակուցող տեսողացն արկանելով։ Իսկ արիացեալքն ըստ ուխիցն. ի խորս խաւարային ձորոցն համարձակեն ի քարաժէռս. դժուարային տեղացն ի խնդիր ականց զանազանաց։ Եւ ոմանք ըստ ջրամոլական լողորդութեն որք քող արկեալ զերեսօքն եւ իջանեն ի յատակս անդընդոտային ծովուն ի խորս խառոչիցն մտանելով. ի խնդիր. լուսափայլ մարգարտաց ոչ ինչ ահ զմտաւ ածելով զվիշապաձեւ զազանաց ծովուն. լաւ համարելով զկորուստ անձանց քան թէ ունայն ձեռօք զվաստակն ժառանգել զանուն։ Եւ այլք ըստ ֆզական արուեստին զ'ոսկոյն գիւտ ճարտարատնեալ յառաջ բերելով զանօթն պատուական։ Ըստ սմին օրինակի ի խնդիր ելեալ այսմ հոգիանորոգ եւ լուսերանգ ծաղկաւէտ եւ վարդափթիթ անուշահոտ բուրաստանիս պատուական եւ մեծասէր եւ բարեմիտ պարոն մինասն եւ իւր եղբարքն ծերուն եւ գաբրիէլն եւ ծնողացն վարդանն եւ հաւմին Եւ ստացաւ զմարգարտաշար տառս զայս. եւ ըստ կանաւիկ մեծութիս զպայծառութիս մանկանց ՚ըբ եկեղեցւոյ։ Եւ ես սարգիս երէց անպիտան գրիչս տեսի զեռափափագ սէր սոցա զոր ունէին հետ ՚րբ գրոցս. եւ ձեռն արկեալ գրեցի ըստ իմում տկարութենս. եւ ըստ ՚աւ յաջողութեն յաւարտ ածի զՙըբ գիրքս որ կոչի յայսմաւուրք։ Որ ունի հաւաքեալ ինքեան զՙոսս տէրունական տաւնիցն եւ զպատմութիս եւ ըզգործս առաքելոցս եւ զմարգարէից զվարս ՚րբոց հարանցն եւ զյիշատակութիս ամ սրբոց հնոց եւ զնորոց։ Զարիութի թգւորց եւ զհրաշագործութիս հրպց։ Զժուժկալութի կուսանաց. եւ զճգնաւորութիս որհամը ներկեալ մարտիրոսացն որք ազգի ազգի տանջանօք եւ դառն մահուամբ կատարե-

digitised by A.R.A.R.@

ցան վն անուանն քն։ Եւ եղեւ գրաւութն գրոցս. ՌՃԾԳ Թուականիս Հայոց ի լաւ եւ ընտիր օրինակէ որ սափ ծերէնց եւ այլ աւելի քան զնորայն զի չառ նոր վկայք սառ գրեցան եւ հարչսապացս գիրքս այս քան զայն գծագրութի եղեւ սուրբ յաբեթական մեծ ստմար, ն յերկ մեսսասան յոբելենին յիսուն ւերեկ աւ[ելորդին]։

Էջ 567ա (վերջին ստացողին յիշատակարանը). Փառք գոհութի (բառ մը պատռած) մատուցանեմք անզննին տէրութե եւ միոյ ածութե հօր եւ որդւոյ եւ հոգւոյն նդյ անզրաւ յաւիտենից որ ողորմութբն իւրով արար զմն յոչնչէ ըստ սաղմոսերգողին որ ասէ ողորմութ տն լի եղեւ երկիր. եւ բանիւ տն երկինք հաստատեցան եւ հոգւով բերանոյ նր ամ զօրութք նոցա։ Իսկ որդիք մարդկան ըղձաւ անընչմամբ կարօտացան նմանիլ տն ըստ առաջինքն ընտիրքն եւ հաճոյքն այ զոր վերինն խոկալով օրինագրելով եւ հաստահիմնելով բնական բանական բարոյական եւ գրաւորական օրինօք զոր կարի վայելուչ օգտակար. գոյն տալ բաժին. զտաւողին ընչից զի թերեւս նմանիցեն զտաւողին բարեաց. սոյն եւս կնքէ զկենսատուն 'ի փրկաւէտ աւետարանին իւրում ասելով երանի ողորմածաց զի նոքա զողորմութի գտցեն. նա եւս եթէ եղբարք գթած ոք եւ հայրն ձեր երկնաւոր գթած է զի թէպէտ ի մէջ ամ բարեգործութեց ողորմութին յոյժ հաճոյ եւ ընդունակ է առաջի բարձրելոյն. այլ սակայն (յաջորդ տողերուն մէջ նօտրագրերը ենթադրութեամբ են թուղթը պատռած ըլլալուն պատճառաւ) ողորմութին զոր առ եկեղեցին այ լինիցի. յաւէտ առաւել ընդունակ է եւ կարի հաճոյ տեառն այ. այլ եւս երանելի. եւս (բառ մը պակաս) ըստ. ամենայնին յետայետոյ մարգարէին որ ասէ երանի որ ունիցի զաւակ ի սիոն եւ ուղէ երուսաղէմ. զոյն օգտակարանաց լուեալ եւ սիրով նորին զմայլեալ պարար... յինքն եւ... արդիւնալիր եւ... (կէտագրեալ տողերը մէկ երկու բառ պակաս) առ բարեվայելուչ եւ առատալիր օրհնեալ այրս այս մելքոն որ է ի փեղջէն կմահորու որդի լուսահոգի սուքիասին սա ստացաւ զայս յայսմաւուրս 'ի հալալ ընչից եւ արդար վաստակոց իւրոց եւ եսուր 'ի դուռն նդյ կարապետի մեծի գերահռչակ աթոռոյն զոր որակացեալ կոչի Երնջակու ուրբ կարապետ, եւ անդ անջինջ յիշատակ վն իւր եւ վն ննջեցելոց եւ կենդանեաց իւրոց. եւ արդ մի ոք իշխեսցէ զսա հանել կամ յրաւելլ. եւ գողանալ եւ կամ վաճառել եւ եթէ ոք հանդգնեսցէ զսա հանել 'ի դրանէ սբյ կարապետին անմասն լիցի ի քէ եւ որոշեալ յորբայութէ. եւ զնզովս առցէ ճժց հայրապետաց եւ ստացողի սորին մեղացն պարտական ձայցէ. իսկ անդ պահօղքն եւ խնամօղքն մեան բարեաց ընկալցին 'ի տէ այ մերոյ Եւ արդ արտասուալից հառաչմամբ ժամեմ ի ձէնջ ով մանկունք նր սիոնի, որժամ զիպիցէք սմա եւ օգտիցիք 'ի սմանէ յիշեսջիք 'ի մաքրափայլ աղօթան ձեր զվերջին ստացող սորին զբարեմիտ եւ զամենաէր վերնաձրեալ[1] աղնուազունեաղ զպրն մելքոնն. եւ ընդ նմին զծնօղքն սորին. լուսահոգի. սուքիաս հայրն. եւ զդատառամ մայրն, եւ ընդ նոցին յիշեսջիք զեղբարք նորին զգալուստն զբարխուտարն. եւ զկենակիցք նորին զհանգուցեալ թուխիկն եւ կենդանի եղիսաբեթն (կէս տող պատռուած) քերցն խաթունին եթարին. եւ սարուն. եւ որդւոյն սուքիասին. եւ դստերն մարիամին. այլ եւ հօրեղբօրն մատթէոսին կնոջն գոհարջանին (էջ 50ա կ'րսուի հօրեղբօրորդոցն հայրապետին, իսկ 51բ «որդոցն Յովաննէսին եւ այլն») զարմից եւ զաւակաց նոցին. եւ ամ արեան մերձաւորաց նոցին որոց ողորմեսցի ասուածն ած ողորմութեան ամէն։

[1] Այսինքն վերին ձիրքերու, երկնային շնորհներու արժանացած։

Եղեւ ստացումն սորին 'ի թուահաշուին հայոց ՌՃՂԶ ամանն. առբելի ժԱին. որ էր ի ժամանակս պարսից անարգութեան եւ անօրէն. նադրշահին. զոր յոյժ նեղութի ունէին պարսից իշխանութե ենթ ժողովուրդքն. թող զանիրաւ հարկապահանջութին զոր առաւել էր քան զառաջինն. յաւել (= յաւելլ) եւս չար ի վն չարեաց եւ վէրք ի վն վիրաց. զոր նախջեւանոյ երկրին վերայ ձգեալ էին լն ալթունն, եւ երեւանու երկրին խալթունն. որ բազումք հանդերձ ամենայն ընտանեօք ելեալ 'ի տանց եւ 'ի հայրենեաց փախեան յերկիրն օսմանցոց. եւ այլ մնացելոցն, բազում վիշտս եւ նեղութ հասուցին. ոմանց զինչսն աւարառեալ վաճառեցին եւ այլոցն ներքոյ փայտի մահացուցին, եւ այլոց զկին եւ զորդիս եւ զդուստրս վաճառել տային եւ զայլ անթիւ անըմբռնելի (= անըմբռնելի) նեղութիւն դրմբ. զորս ոչ կրեցաք զոր պետն բարեաց զինքն բարութիւն արասցէ նոցին ամէն. ծրեցաւ 'ի (մնացեալ կէս տողը պատռած)։

---

## Գ.

### Ցուցակ Ձեռագրաց Մասնաւոր անձանց:

## 1.

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

?

*ԹՈՒՂԹԸ 478: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10×7 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ խառնակ միասիւն: — ԳԻՐ՝ նօտր. թանաք՝ սեւ. վերնագրերը, սկզբնատողերը եւ սկզբնատառերը երբեմն կարմիր, ուրիշ անգամ միահետ առանց բաժանման. տող՝ 17: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հինցած, սկիզբէն եւ վերջէն պատռած եւ պակաս: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 364աբ: — ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴ՝ պատկեր կամ զարդագիր չկայ: — ԳՐԻՉ՝ եւ ստացող Տիվրիկցի Յովհաննէս. տեղ եւ թուական անյայտ: — Կը պատկանի Տէր Գրիգոր քահանայ Տէր Յակոբեանի:*

Կը պարունակէ. 1. Քարոզ երից մանկանց (սկիզբէն պակաս). էջ 1ա—14բ։

2. Այլ քարոզ դանիէլ մարգարէի որ սաէ փախեցաւ թագաւորն ի կերպ գազանի։ Եւ զի թագաւորն նաբուգոդոնոսոր... էջ 14բ—33ա։
3. Այս քարոզ եւ պատմութիւն. վսն. գալստեան գոգայ եւ մագոգայ է։ Եւ յետ դարձի գերութեան բաբելացոց... էջ 33ա—49բ։
4. Քարոզ մելքիսեդեկի քահանային Աստուծոյ. թագաւորն սաղիմայ սաղէմ. անուանեցաւ... էջ 49բ—55բ։
5. Պատմութիւն վարուց մովսէսի նախամարգարէին։ Նախայմարգարէն Մովսէս ած ախտուն որ առաջին էր... էջ 55բ - 64ա։

digitised by A.R.A.R.@

6. Հոկտեմբերին գ. վս. արձակման ատտանայի ի ա. ամ կապանաց։ Ի ամին աւուր արձակման ատտանայի... էջ 64բ—67բ։
7. Քարոզ վս. Ջրհեղեղի որ ասէ նոյ էր ամաց... Ցորժամ եղպան կայէն... էջ 67բ—95բ։
8. Քարոզ....որ ասէ առ գետս բաբելացոց։ Եւ զի յառաջ քան զզալուստն քի. բոլոր աշխարհս... էջ 96ա—120ա։
9. Քարոզ վս. հաղորդութեան ի բան որ ասէ. փորձեսցէ մարդ զանձն եւ ապա... Եւ արդ վասն հաղորդելոյն բազում ինչ ասելի է... էջ 120ա—136ա։
10. Վս. պատկերաց երկրպագութեան պարտ է թէ ոչ։ Այլ վասն զի մեղադրեն մեզ... էջ 136բ—141ա։
11. Կիրակոս վարդապետի ասացեալ յաղագս Քրիստոսի մարդանալոյ։ Իսկ վասն այն բանին որ գրեալ էիք որ ասեն թէ Քս. լոկ մարդ էր... էջ 141բ—148ա։
12. Յոհաննու մայրեվանեցոյ վս. ընդունելի եւ անընդունելի յաղօթից։ Ափոփեալ զմիտս մեր իմացուք... էջ 148ա—161բ։
13. Քարոզ վս. աշտարակին որ ասէ եկայք իջցուք եւ խառնեսցուք զլեզուս։ Յորժամ եւ նոյ ի տապանէն... էջ 162ա—190բ։
14. Մաթէոս վարդապետի քարոզ ի բան. Այր մի իջանէր Եմ. երիքով. Գիտելի է Զի աքանչանալ պարտ է... էջ 191ա—201ա։
15. Առաջին կիրակին բուն բարեկենդանին Քառասնորդաց պահոց, Ս. Բարսեղի եպիսկոպոսի կեսարու յաղագս պահոց։ Փող հարէք ասէ ի նոր ամսեան... էջ 201ա—217ա։
16. Հարցումն. յորժամ սատանայ անկաւ, Ադամ եղեալ էր թէ ոչ։ Պատասխանի. Ադամ ի դրախտին էր (եւ ուրիշ հարցումներ) էջ 217բ—218բ։
17. Աւետարանեցաւ սուրբն Մարիամ ի Նազարեթ... էջ 219ա—220բ։
18. Այլ վասն զի հազարապետն խորոցն Այ. եւ երրորդ երկնից արժանաւորն... էջ 221ա—223բ։
19. Նորին Կիրակոս վրդ. ի ասացեալ։ Առ որս ասացից եթէ պահոց... էջ 223բ—226բ։
20. Նիկիոյ սբ. ժողովն, սատակումն Արոսի. Արիոս երեց էր... էջ 227ա—234ա։
21. Ցայտնութիւն Յի. Քի. ի ձեռն որոյ ետ ցուցանել...ի Յովհաննէ առ եւչն եկեղեցիս որ են ասիայ։ Շնորք ընդ ձեզ եւ...էջ 234ա—275բ։
22. Եւսեբի հայրապետի ժամանակագրի յեկեղեցոյ պատմութենէն վկայութիւն վս. տեսլեան յովհաննու։ Իսկ զի՞նչ ասասցուք... էջ 275բ—276ա։
23. Վասն սիւնհոդոսին որ յԵփեսոս եւ կործանման Նեստորին։ Արդ այս ինչ է զոր հանդերձեալս է... էջ 276բ—299ա։
24. Աշխարհացոյց է։ Նախ քան զաս խնդրեսցուք եղեալքս զէն եւ ապայ... էջ 299ա—318բ։
25. Յաղագս կազմութեան մարդոյն Գր. Նիւսացւոյն ասացեալ է։ Ի չորից գոյացեալ... էջ 318բ—63բ։
26. Հարցմունք եւ պատասխանիք ի գրոց սրբ. Աթանասի։ Մինչ ոչ էին ստեղծեալ հրեշտակք եւ մարդիկք... էջ 365ա—375բ։
27. Հարցմունք աաճկաց. Ասէ թղւրն. ընդէ՞ր ինքն Աշ. իջանէր... 375բ—379ա։
28. Բանք ընդդիմադրականք առ մահմետականսն... Արդ մեք զերիս Աստուածս... էջ 379ա—380ա։
29. Երանելոյն Աթանասի արքեպս. Աղէքսանդրացոյ հարցմունք... էջ 380ա—478բ (վերջը պակաս)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 14բ. Զովանէսն եւ զիս ի հրոյն յաւիտենից եւ զիմ ծնօղքն ի մեղաց ազատեայ. եւ արժանի արայ անմահ կենացն դրախտին։ ամէն։

Էջ 141ա. զի զիմ յիշէք. զտիպրիկցի յովանէսն։ եւ քն փառք յաւիտեանս ամէն։

Էջ 276ա. Զմեղաւոր եւ անթիւ մեղաց շաղաղեալ յովանէս սուտանուն եւ զգծողս. եւ զծնաւղս իմ եւ զեղբայրս իմ յիշեսջիք մի տր ողորմեայիւ. եւ ած ձեզ յիշէ. իւր միւսանգամ գալստն ամէն։

Էջ 363բ. Ո՞վ հեռաւոր յիմաստութեանց յիշեցէք անիմաստ գծողս ի տր։

Էջ 364բ (կնիք մը). Քի ծա. Աղան. ՌՄԱ.

Էջ 375բ. Զտիպրիկցի։ Յովանէսս յիշեցէք. ի քս։

Էջ 429բ (այլ գրչէ). Ո՜հ ո՜հ որ մինասիս ումսե։

Էջ 449բ. Զյովանէսս. տիպրիկցի յիշեայ։

Էջ 469ա. Զովանէս. տիպրիկցի. գրող. եւ ստացող սորայ. յիշեցէք ի քս. ած։

## 2.

## ՏՕՄԱՐ ԵՒ ՏԱՂԱՐԱՆ

### ՌՂՋ = 1647։

*ԹՈՒՂԹՔ՝ 179։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 12×9×2·5սմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, միասիւն։ — ԳԻՐ՝ նօտր. Թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատառերն ու սկզբնատողերը կարմիր, երբեմն լեղակով։ Տող՝ 17 (Տօմարին մէջ) կամ 16 (Տաղարանին մէջ)։ — ՆԻՒԹ՝ Թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ խաւաքարտէ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 5բ, 84աբ, 89ա։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐ՝ քիչ եւ միջակ արուեստով։ — ԳՐԻՉ՝ Աստուածատուր. ստացող՝ խոճա ամիրշում. Թուական՝ ՌՂՋ = 1647. տեղ Պոլիս։ — Կը պատկանի Տէր Գրիգոր քահանայ Տէր Յակոբեանի։*

Կը պարունակէ. 1. պարզատօմար էջ 1ա—83բ (նաեւ կողին վրայ)։ 2. Տօմարական դիտողութիւններ Քրիստոսի մկրտութեան, խաչելութեան վրայ (սկիզբը պակաս) էջ 85ա—88ա։ 3. Վասն յունաց ծռազատկին. էջ 88բ (կը յիշուի թէ ուճծը եւ ումդ թուերուն ծռազատիկ պիտի ըլլայ)։ 4. Վասն է ժողովոյն. էջ 89բ—90ա։ 5. Պատմութիւն ուղղափառ հաւատոց. խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ... էջ 90ա—92ա։ 6. Տաղարան Յովասափ Սեբաստացւոյ. էջ 94ա—179ա։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Էջ 92ա. Տաղ Սբ. Էջմիածնի. փափաք ունիմ թէ գամ զքեզ տեսնեմ

digitised by A.R.A.R.@

ծանցր ղաճար էջմիածին։ Երկնային լուսով կազմեալ խիմ փառ. ու։

Էջ 93ա. Թվին ռմծթ փետրվարի բ. Ցոն է Սուրբ Սարգիսեա։

Էջ 93բ. Իբր գրչափորձ Յովասափի տաղերէն տուն մը։

Էջ 179բ (Գլխաւոր յիշատակարան). Արդ գրեցաւ սայ ի թվականութեան հայոց. ռղզ. Յունվար ամսոյ. ի հայրապետութեան որ էջմիածնայ փիլիպպոս կաթողիկոսին. ի որ Հմ առաջնորդութեան ծնատուր վարդապետին. ի քաղաքն կոստանդնուպօլսի ի դուռն որ տարգոի եկեղեցոյն ի վայելումն խոճայ անմիրզումին. ձեռ բարով վայելէ տացէ ամէն։

(Վերջին կողին վրայ Նոր գրով։) Այս գիրքն կուպատկան առաջի դասատուն աշակերտին որ է Յովանէս Տէր Յակոբեանց ի 14 մայիսի 1888 թ–ին ի քաղաքն Նոր Բայազիտ։

Թէեւ յիշատակարանին մէջ գրիչը յիշուած չէ. բայց էջ 119ա եւ 143ա տառանաւորներուն վերջին տուներուն մէջ հիւսուած է Աւետուր, ինչպէս էջ 143ա. պզտրմութիւն շնորհեա յաւուրն ահեղին. աւետուր անարժան մեղապարտ գրչին։

## 3.

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՌԿԷ = 1618։

*ԹՈՒՂԹՔ՝ 92։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14·5×10×2 սմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն։ — ԳԻՐ՝ նոտր. թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատողերն ու սկզբնատառերը կարմիր. տող 15–18։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — Իբր պահպանակ դրուած են սկիզբէն եւ վերջէն երկու երկու թերթ մագաղաթ, առաջինը բոլորգիր Յայսմաւուրքի եւ վերջինը անցման երկաթագիր Գործք Առաքելոցի Մեկնութեան (՞) մասցորդ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ մէջերէն եւ վերջէն թերթ է ինկած։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ չկայ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ՝ խիստ քիչ եւ շատ անարուեստ։ — ԳՐԻՉ՝ Դանիէլ աբեղայ. տէր՝ Գրիգոր վարդապետ. թուական ՌԿԷ — 1618 տեղ անյայտ։ — Կը պատկանի Տէր Գրիգոր քահանայ Տէր Յակոբեանի։*

Կը պարունակէ.

1. Գովեստ եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, հայրապետաց, իշխանի որդւոյ, տանուտէրաց (նամակի սկիզբներ են). էջ 1ա — 5ա։
2. Թխտի յետեւի (նամակի վերջաբանութեան օրինակներ) էջ 5ա—7ա։
3. Օրհնութիւններ (քարոզներու վերջը ժողովրդին օրհնութիւն տալու օրինակներ) էջ 7բ—16բ։
4. Քանի մը տող ժամանակագրութիւն, "ԹՎն. ՋԲ. թւքն. բռնամբօղ առաւ... ՋՉԳ սուլէյման (= Սիւլէյման) թգն. գնաց ղրաղասա առաւ„ էջ 16բ։
5. Ջերկաթնոսկէջրէ. թէ ինչպէս պիտի. էջ 16բ—17ա։
6. Կանոնական խրատք ընծհանրական ամ հայոց կիրակոս վարդապետէ Երզնկացոյ...։ ԹԱստուծոյ ամենակալէն աւրհնութիւն եւ պահպանութիւն եւ ի նուաստ կիրակոս վարդապետէ աղօթք... էջ 17բ—41բ։
7. Տօմար (սկիզբէն պակաս) էջ 42ա—43ա։
8. Աւետարանք բժշկութեան եւ հանգստեան (նշանակուած են գլուխները) էջ 43բ։
9. Առակներ. էջ 43բ—46ա։
10. Նարեկէն 12 գլուխ. էջ 46ա—75ա։
11. Պօղոսի առաքելոյն ի կաթուղիկեցւոց թղթոյն. Սիրելիք Սիրեսցուք զմիմեանս. էջ 75բ—77ա։
12. Օրհնութիւն քահանայից եւ ժողովրդոց. էջ 77ա—80ա, 81բ—82ա։
13. Սեւ այծու ճիկարըն առ... էջ 80բ։
14. Տօմար էջ 82ա—92բ (սկիզբէն եւ վերջէն պակաս)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ (սկզբի պահպանակին վրայ)։ Այս է տապան ազուլեցի գրիգորի որդի Ղազարոս աւէ։

Էջ 41բ (բուն գրչէն). Գրեցաւ քարոզս Կիրակոս վարդապետի յաւրինած հրամանաւ Գրիգոր վարդապետիս մերոյ եւ ձեռամբ սուտանուն Դանիէլ աբեղայիս ի թվին հայոց ռկէ։

Էջ 47բ (օտար եւ տգէտ գրչէ). Յիշատակ է այս գիրքս տիրացուին եւ կողակից սիրոյլին եւ որդոցն տիրացու մաթէոսին սիրանոնոց պետրոսին որ կենդանի կան աշխարհի (յետոյ բարեմաղթական աղօթքներ)։

Էջ 64բ. Ես անարժան տիրացու մինասըն թվին ռ. ճ. ձեին։

Էջ 66ա. մեղապարտ տիրացու մինացականին։

Էջ 66բ. վայելում տիրացու մաթէոսին թվին ռճձեին։

Էջ 81ա, 82ա—բ կան զանազան գրչափորձեր։

(Վերջին պահպանակին վրայ) հը տարի է քանի որ հոռոմն ծառաղատիկ ուրեր են. այժմ թվն. ռկզ. է։

Յիշատակագրութիւնները, բացի երկրորդէն, բոլորն ալ օտար գրչէ են։

## 4.

## ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

1418—1651։

*ԹՈՒՂԹՔ՝ 561։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37×26×10 սմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, իւրաքանչիւրը՝ 31×9 սմ.։ — ԳԻՐ՝ բոլորգիր. թանաք՝ սեւ, վերնագրերը, սկզբնատառերն ու սկզբնատողերը կարմիր եւ կանաչ. տող՝ 37։ — ՆԻՒԹ՝ թուղթ, իւրաքանչիւր թերթը կազմուած երկու իրարու կպցուած բարակ թերթերէ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հինցած, վերջին կողին տախտակը ինկած, վերջէն թերթեր պակաս, պատռտած, միջին մասերը գոհացուցիչ կը համարուին։ — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ չկայ։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ, պատկեր եւ զարդագիր չունի։ — ԳՐԻՉ՝ Յակոբ. ստացող՝ Սիմաւոն. տեղ՝ անյայտ. թուական՝ յիշուած չէ, բայց ձեռագիրը գրուած պիտի ըլլայ 1418–1651 թուերուն մէջ, որովհետեւ իր վերջին նոր վկան Յիմար վանեցի նահատակուած է 1418ին. իսկ յիշատակագրութեանց մէջ ամէնէն հինը ՌՃ — 1651 թուէն է։ — Այժմ կը պատկանի Տէր Մովսէս քահանայ Տէր Մովսէսեանին։*

Նոր վկաներէն կը պարունակէ ինչ որ նախորդ թիւ 32 Յայսմաւուրքը, բացի Յովհաննէս Խլաթեցիէն. հոս աւելի է Եղիսաբեթ խառաբաստայ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ խիստ շատ են. ամէնէն ընդարձակն է ասոնց մէջ՝

digitised by A.R.A.R.@

Էջ 496բ. Որոց աղօթիւքն ողորմի քն սիմաւոնին եւ իւր ծնաւղացն դաւթին հունարին եւ իւր կողակից շահպեկուհն եւ իւր ծնաւղացն հասանին զաւհրին. եւ զատերաց նորին: Իսկ դմ(ա)լ յիշեցէք զիս զծաղս եւ իւր ծնօղքն ամիրխան եղիսաբեթն եւ որդին խոջայելն մաթէոսն զաւկասն: Դարձեալ աղաչեմ զձեզ ով մանկունք եկեղեցոյ յիշեցէք զկողակիցն իմ խանում որ բազում աշխատանք ունի ի վր սբ տառիս. ամ յիշողն յիշեալ եղիցի ի միւսանգամ գալստեանն ամէն:

Մնացեալներուն մէջէն կը գտնենք միայն անոնք՝ որ որեւիցէ նոր տեղեկութիւն մը կու տան:

Էջ 8ա. ...սիմաւոնին... հոգեւոր որդի ներսէսին կողակից զաւհրին որդւոցն փօթին պաղտասարին:

Էջ 10ա. ...սիմաւոնին... որդի վարդանին գրիգորին աղասուլթանին մարթին որ հանգուցեալ էն առ քս:

Էջ 15ա. ...սիմաւոնին... հօրեղբօր թօրամիշին եւ իւր կողակից կեանճին զատէր խանումին:

Էջ 16ա. ..սիմաւոնին.. իր որդի առաքելուն հիւրիխանին:

Էջ 33ա. ...շահպէկուն եւ իւր եղբարցն յուսեփին մաթոսին:

Էջ 37ա. ...Ստացող գրոցս ներսէսին եւ իւր ծնողացն թումին էլթարին որ հնգցլ էն առ քս:

Էջ 53ա. ...սիմաւոնին... եւ եղբայր պօլսուն եւ իւր կողակից սառիկին եւ իւր որդոցն զաքարին գրիգորին:

Էջ 64բ. ...շահպէկուն եւ իւր եղբաւր յուսեփին եւ իւր կողակից նանեփին եւ յակոբ գծողիս:

Էջ 79ա. ...սիմաւոնին... զատերացն մարինասին աղասուլթանին զաւհրին հունարին:

Էջ 126ա. ...սիմաւոնին եւ եղբարցն փարղուզաթին միրաշին վարդանին եւ մեղաւոր յակոբ գծողիս:

Էջ 175ա. ...յիշեա իմ ծնողացն որ հանգուցեալ էն առ քս:

Էջ 410ա ...յակոբ գծողիս եւ որդի իմ ղ[ուկաս]ին որ բազում աշխատանք ունի ի վերայ սորա (իսկ էջ 440ա յիշելով իր երեք որդիները՝ Մաթոս, Ղուկաս եւ Իսրայէլ, անոնց համար ընդհանրապէս կ'ըսէ "ունին աշխատանք„):

Էջ 507բ. ...յակոբ գծողիս եւ իմ ծնաւղացն եւ եղբայր իմ յովսէփին (Մնացածը պատռած):

Երկու տեղ իբրեւ ստացող կը յիշուին Տէր Յոհան, Պօղոս եւ Պետրոս. այսպէս էջ 447բ "Որ ողորմի տր յոհանին ըւէս պօղոսին. եւ ըւէս պետրոսին եւ ամ արեան„ էջ 448բ "Որոյ ողորմի ստացողի գրոցս տր "յոհանին պօղոսին եւ ամ:„

Յետին ստացող մը՝ Մահտեսի բարսեղ առաջին գրչին թողած բոլոր յիշատակարանները ջնջած է՝ անոնց վրայ նոր թուղթ մը կպցնելով եւ իր անունը գրելով. Պէտք եղաւ յիշեալ բոլոր թղթերը հանել եւ տակի յիշատակութիւնները կարդալ. Մահտեսի բարսեղի ամենէն ընդարձակ յիշատակութիւնն է՝

Էջ 89ա. Ողորմեա ստացողի սբ գրոցս մահտեսի բարսեղին ծնօղացն սանոսին եւ մարիամին. կենակցին սառային. եղբարցն սողոմոնին գրիգորին եւ ներսէսին եւ ինձ երեմեայ յիշատակարան գրողիս եւ ամ արեան մերձաւորաց (էջ 245բ կ'ըսուի "Երեմիայ սուտանունն քհյի որ այսմ յիշատակներն նորոգեալ ծրեցի„ (նոր փակցուցած թղթերուն համար է):

Օտար գրիչներու յիշատակութիւններն են, բոլորն ալ լուսանցքի վրայ:

Էջ 9բ (շղագիր). ստացողի սբ գրուս պետրոսին պապանին գրիգորին բարսեղին եւ համանից նորին յարթենին եւ սալիկին:

Էջ 28ա (շղագիր). ստացողի սբ գրուս պետրոսին եւ ծնօղացն հարթենին սալիկին պետրոսին բարսեղին պօղոսին եւ ամ ընտանեացն եա նորին:

Էջ 40բ (այլ գրչէ նոտր). թվին ռճձե հօտայի մէջ գրեցաւ:

Էջ 90ա (շղագիր). յիշատակ է սամավուրքս ձեռ լուսաւորչէ իւրան հոգին յարէի որդի:

Էջ 162ա (մանր բոլորգիր). մի քերան եւս յիշեցէք անարժան ծառայս օհանին ամէն:

Էջ 326բ (շղագիր) Եւս սաաւել ըստացօղիս սբ գրուս պետրոսին եւ ծնօղացն յարէին եւ մօրն սալիկին եղբայրն գրիգորին եւ համայնիցն:

Էջ 353բ (նոտր) եւ տիրացու յակոբըս գրեցի թվ ռճ:

Էջ 355բ (նոտր). եւ մեղոր (= մեղաւոր) եւ անբան խաչատուրի որդի բասումէլս գրեցի օվ որ յիշէ յիշվլ լինի թվին ռմիե ին մարտի լա ին:

Էջ 388ա (շղագիր) ողորմի բստ(աց)ող ծերուս մանուկին անունն:

Էջ 442բ (ոսկէա գրչէ). եւ լուսայհոգի մուրատի որդի բաղտասար էս գրեցի թվի ռ(...)իցն մարիսի ինթին օվ որ կարդայ այսէ ամ ողորմի մուրատի հոգուն ամ հոգին լուսաւորէ ամ զատասոտա (Մնացածը կազմի ժամանակ կտրուած):

Էջ 473բ (բոլորգիր) պետրոս գէւգոր բաղտասար այս երեքս կարդացող մարգիւըս լեայերան ամ ողորմի տայցէք ամէն:

## 5.

## ԲԱՌԱՐԱՆ

?

*ԹՈՒՂԹՔ՝ արդի վիճակին մէջ 69: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16×11×0·6 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ Նոտր. Թանաք՝ սեւ, վերնագրերը եւ սկզբնատառերը կարմիր կամ կապոյտ, տող՝ 26: — ՆԻՒԹ՝ Թուղթ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ հինցած, սկիզբէն եւ վերջէն պակաս: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ, լուսանցազարդ, պատկեր ու զարդագիր չկան: — ԳՐԻՉ՝ անյայտ, որովհետեւ բացի աննշան գրչափորձերէն՝ տող մը յիշատակութիւն չկայ: — Կը պատկանի Տէր Յակոբ քահանայ Տէր Յակոբեանցի:*

Մատեանս է բառարան, որ կը պարունակէ Ս. Գրքի դժուարիմաց բառերը՝ գրքերու կարգով. մեր ձեռքը եղած մասը կը պարունակէ Երրորդ Թագաւորութեան Ծ գլխէն մինչեւ Մարգարէութեանց վերջը:

## 6.

## ՏՕՂԱՐԱՆ

1827.

*ԹՈՒՂԹՔ՝ 22: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×11 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ Նոտր. Թանաք՝ սեւ, կարմրատողեր, զարդագրեր եւ լուսանցազարդեր չկան. տող՝ 20-24: — ՆԻՒԹ՝ Թուղթ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ նոր եւ մաքուր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա-բ, 22աբ: — ԳՐԻՉ՝ հեղինակը Զաքարիա վրդ. Գուլասպեան, ստացող՝ Անտոն արքեպս. տեղ՝ Հաղբատի Ս. Նշան վանքը. Թուական 1827: — Կը պատկանի Տէր Յակոբ քահանայ Տէր Յակոբեանի:*

digitised by A.R.A.R.@

Մատեանս է ՝ Ցաղարանիկ գաքարիա վրդպտի գիւլասպեան բէհրուդեանց, աշակերտի Տն Պօղոսի հոգեւոյս Սրբոյն Արհիեպսի Պրուսայի եւ Նիկոմիդիայ։ Ի Հայրապետութեան Տն Եփրեմայ հեղահամբոյր Սրբնագոյն կաթողիկոսի ամ հայոց։ Ի 1827 ապրիլի 12։ եւ ամհզ։ Ի սբ՝ նշան վանս հաղբատու, որ ի սաւորգաց ձորն։„ Կը պարունակէ Զաքարիայի յառաջաբանը, 12 տաղ, վերջն ալ շղագրով երկու նոր ոտանաւոր "Հրաշագեղ տիպ երեսոյդ„ եւ "կանխեմ ձայնել ի խոր քնոյդ։„

Ցիշատակարանն է էջ 20ա. "ըստ հրամանի Սրբզն հօր իմում Տն Անտոնի առաքելապատիւ Արհիեպն, զայս տետրակս իմով ձեռամբ գծագրեալ՝ նմին ընծեան նուիրեցի. Ն. Ծ. զ. վրդպտ։„

Ըստ այսմ տետրակս բնագիր է։

# 7.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԺԹ դար։

*ԹՈՒՂԹՔ՝ 42: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13×10 5 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ զանազան տեսակ, բոլորգիր, նօտր եւ շղագիր. Թանաք՝ սեւ, կարմրատողեր ու զարդագրեր չկան. տող՝ 11, 16, 12: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ շատ խեղճ լաթակազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ զոհացուցիչ: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա-3ա, 8բ-9ա, 10բ, 19բ-21ա, 42աբ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ՝ չկայ. էջ 21բ եւ 37բ մէյմէկ մեծադիր անարուեստ պատկեր: — ԳՐԻՉ՝ անյայտ. բայց նոր ժամանակի բան է: — Կը պատկանի Տէր Ցակոբ քահանայ Տէր Ցակոբեանի:*

Կը պարունակէ. 1. Թվական չինեալ տը մինասայ (1827). Որ ենթ տաանին (տես թիւ 31 ձեռ.) էջ 3բ—4ա։ 2. Եւ նոյն ժամայն շարժումն մեծ եղեւ՝ զի քս ի նմանութիւն էջ առ կոյսն էջ 4բ—8ա. 3. Տաղ՝ երգնում արեւ արքաեական. էջ 9բ։ 4. Տաղ՝ լեզուաւ լիզեմ զլեզլն. էջ 10ա։ 5. Նարեկէն քանի մը գլուխ. էջ 11ա—32բ։ 6. Աղօթքներ. Ած ի տը կեանք եւ արարիչ, Ով պարծանդ տիեզ[եր]աց ուրախութիւնդ ամենայն քրիստոնէից, Ողջ լեր թագուհի մայր ողորմութեան, Ամենակարող եւ մշտնջենաւոր Աստուած էջ 33ա — 37ա։ Մնացեալը տպագրեալ Շարականի մը մէկ քանի թերթերն են։

# 8.

## ԱՂԹԱՐՔ

ԺԹ դար։

*ԹՈՒՂԹՔ՝ 131: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×11,5×1·7 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր, միասիւն: — ԳԻՐ՝ շղագիր նման բոլորգրի. Թանաք շագանակագոյն, քանի մը էջ կանաչ. սկզբնատառերը մեծ երկաթագիր, երբեմն կարմիր գոյնով, տող՝ 14: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ խաւաքարտէ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ Նոր եւ մաքուր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա-8բ, 124բ, 126բ-127ա, 129բ-131բ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ եւ զարդագիր չկայ: — ԳՐԻՉ՝ Թուի Միքայէլ որդի Նուպարի, որովհետեւ կախարդական գրերու մէջ (ինչ. էջ 43բ, 48բ եւն) կը յիշուի իր անունը: — Տէր, տեղ եւ թուական անծանօթ, բայց յայտնապէս ԺԹ դարու գրուածք է: — Կը պատկանի Անտոն Միրիմեանցի:*

Մատեանս է Աղթարք, որ կը պարունակէ. ԺԲ կենդանակերպներու բնութիւնը, անոնց սեպհական դեւերը, տուած հիւանդութիւնները եւ իրենց դարմանը՝ խմելու, ծխելու եւ գլխու գիրերով, էջ 9ա—40բ։ 2. Զանազան թլիսմներ գլխացաւի, փորկապի, արենակապի, կատղածի, բերանկապի, լեզուակապի, չար աչքի, թալահի եւ ամ բան յաջողելոյ, դիւահարի, թպղայի, ծննդեան, չար ու բարի ժամի եւն. էջ 41ա—70ա։ 3. Հարցմունք Սողոմոնի ընդ դիւաց. էջ 70բ—78ա։ 4. Վիճակ. էջ 78բ—89բ։ 5. Հաղթարք արանց եւ կանանց. էջ 90ա—121բ։ Անացեալ էջերը վերջին տասցողներու ձեռքով գրուած են քանի մը դեղեր ու երգեր։

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ չկան. բացի աննշան գրչափորձերէ։

ՀՐԱՉԵԱՑ ԱՃԱՌԵԱՆ

ՎԵՐՋ

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

*ՏԻՊ ՈՒ ՏԱՌ, 412–1512–1912: — Կազմեց Թէոտիկ, Հրատարակութիւն եւ տպագրութիւն Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կ.Պոլիս 1912, էջ 192:*

Ահաւասիկ ուրիշ մատեան մ՚եւս Թէոդիկի գործունեայ աշխատութեամբ հրապարակ ելաւ, զոր մանրատառ պրակներէ կազմուած հին եւ նոր գրականութեան գանձարանը կարելի է անուանել։ Մեծ. հեղինակն սոյն գեղարուեստական շքեղ հաւաքածոն իւր կոթող յուշարձան մը կը նուիրէ հայ տպագրութեան մեծ յոբելեանին՝ 400ամեակին. այն հաստատ համոզմամբ, թէ լեզուաւ է, որ կ՚արտացոլայ ազգ մը իւր բնական կարողութիւններն ի գիր առնելով, հետեւաբար լեզուն է, որ պիտի դաստիարակէ եւ զարգացընէ ազգը։

*Տիպ ու Տառ*, գեղեցիկ է իւր արտաքինով՝ Թղթոյն ազնուութեամբ եւ տպագրութեան մաքրութեամբ, մանաւանդ գեղեցիկ են 180 չափ պատկերները, որոնցմով զարդարուած է մատեանս ծայրէ ծայր. բայց գերազանցապէս գեղեցիկ է անոր ներքին բովանդակութիւնն, որ իրաւամբ գնահատման արժանի կ՚ընէ — զայն իւր ճոխ ու լիառատնիւթոց պէսպիսութեամբը։

Ամենէն յառաջ մատեանս մեզի կը ներկայացընէ հայկական գրին ծագումն եւ անոր հետզհետէ կատարելագործումը. այս առթիւ յառաջ բերուած են նշանագիրներու, մեհենագիրներու, բեւեռագիրներու տեսակները, առանց անմիջապէս կից մի առ մի ցուցադրուած են զանազան ձեռագիրներէ նմուշներ։ Ապա քանի մը խօսքով հեղինակն կը պարզէ թէ ինչ եղանա-

digitised by A.R.A.R.@